h.1809507
03-02-2026թ.
Նախընտրած ծանուցման ձևը՝
Էլ.փոստի միջոցով

Երևանի քաղաքապետարան

Դիմող՝ *ԷԴԳԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ*
ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ

ԻՐԱԶԵԿՈՒՄ

Հանրային հավաքի անցկացման մասին Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյան, ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 7-րդ և 9-14-րդ հոդվածների պահանջներով, իրազեկում եմ, որ անցկացնելու եմ հանրային հավաք՝ հանդես գալով որպես կազմակերպիչ և հավաքի ղեկավար։ Ստորև ներկայացնում եմ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ իրազեկմանը ներկայացվող պահանջների վերաբերյալ հետևյալ տեղեկությունը. 1. Հավաքի վայրը՝ քաղաք Երևան, Աջափնյակ, Սիլիկյան թաղամաս 7-րդ փողոց համայնքային սեփականություն հանդիսացող 01-001-519-001 կադաստրային կոդով հողամասում։ 2. Հավաքի սկզբի և ավարտի ժամանակը՝ 2026թ. փետրվարի 18-ին, ժամը 14:00-14:30։ 3. Հավաքի նպատակը.

ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԿՈՌՈՒՊՑԻԱՆ ԵՐԵԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ Հայաստանի Էլեկտրական Ցանցեր ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 10 ԿՎ էլեկտրահաղորդման օդային գծերի անվտանգության գոտիում գտնվող հողամասի սեփականատիրոջը Սապետ Ավետիսյանին 27.05.2024 թ-ին Երևանի քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրամադրվել է N 01/18-02-875-24 շինարարության թույլտվությունը՝ ք. Երևան Աջափնյակ Սիլիկյան թաղ. 7- րդ փողոց h.83/5 հասցեում բնակելի տուն կառուցելու համար:

16.06.2024 թ-ից մինչև հիմա Սապետ Ավետիսյանը իրականացնում է շինարարական աշխատանքներ Հայաստանի Էլեկտրական Ցանցեր ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 10 ԿՎ էլեկտրահաղորդման օդային գծերի անվտանգության գոտիում գտնվող հողամասում։ 27.05.2024թ-ին Երևանի քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից Սապետ Ավետիսյանին տրամադրված N 01/18-02-875-24 շինարարության թույլտվությունը <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի, 2-րդ մասի համաձայն անվավեր է՝ հիմք ընդունելով հետևյալ փաստերը. 1. **Բացակայում է «Հայաստանի Էլեկտրական**

Ցանցեր» ՓԲԸ-ի գրավոր համաձայնությունը: Բնակելի տան նախագիծը գրավոր չի համաձայնեցվել Ցանցեր ՓԲԸ-ի հետ՝ ի խախտումն **ՀՀ Կառավարության 13 ապրիլի 2023թ. թիվ 523-Ն որոշման 27-րդ կետի** պահանջի. ՀՀ կառավարության 13 ապրիլի 2023թ. թիվ 523-Ն որոշման 27-րդ կետի համաձայն.

Եթե կազմակերպությունները կամ ֆիզիկական անձինք էլեկտրահաղորդման գծերի անվտանգության գոտիներում իրականացնում են նոր շենքի կամ կառույցի շինարարություն, հիմնանորոգում կամ վերակառուցում, ապա այդ աշխատանքների կատարման նախագծերի վրա պարտադիր կարգով պետք է առկա լինի էլեկտրահաղորդման գծերը տնօրինող կազմակերպության գրավոր համաձայնությունը, հակառակ դեպքում, անվտանգության գոտում սույն կանոնների պահանջների խախտմամբ կառուցված շենք-շինություններին կառուցումից հետո չեն տրամադրվի էլեկտրամատակարարման տեխնիկական պայմաններ (սպառիչի էլեկտրական ցանցին միանալու պայմաններ): 2. **Անվտանգության գոտու պահանջների խախտում:** Կառուցապատումը տեղի է ունենում 10 ԿՎ էլեկտրահաղորդման օդային գծերի անվտանգության գոտիում՝ ի խախտումն **«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասի.** էներգետիկայի մասին ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն.

Էներգետիկայի բնագավառի օբյեկտների էներգատեղակայանքների անվտանգության գոտիներում արգելվում է՝ ա) կատարել հողային աշխատանքներ՝ առանց էներգատեղակայանքների սեփականատիրոջ կամ տնօրինող անձի թույլտվության, բ) կառուցել շենքեր, կառույցներ, շինություններ, իրականացնել այնպիսի գործունեություն, որն անհնար է դարձնում կամ դժվարացնում է էներգատեղակայանքների սպասարկումը կամ սպառնում է դրանց անվտանգությանն ու հուսալիությանը: 3. **Նվազագույն հեռավորության խախտում:** Շինարարական թույլտվության իրավիճակային և գլխավոր հատակագծերից պարզ է դառնում, որ կառուցվող տունը տեղակայված **չէ** հողամասի աջ սահմանագծից առնվազն **3.0 մետր հեռավորության** վրա՝ ի խախտումն **ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 22.05.2023թ. թիվ 04-Ն հրամանի հավելվածի 132-րդ կետի**: Բնակելի տան կառուցման նախագիծը կազմվել է Հաբշին Նախագիծ ՍՊԸ-ի կողմից՝ ճարտարապետ Վ. Ավետիսյան, կոնստրուկտոր Ս. Մելքոնյան, տնօրեն Ա. Անդրեասյան: 4. **Կեղծ տեղեկատվությամբ երաշխավորագիր:** «Հաբշին Նախագիծ» ՍՊԸ-ի 08.05.2024թ. թիվ հ.293/24 երաշխավորագիրը, որը հաստատում է նախագծի համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը, **կեղծ է**, քանի որ Հաբշին Նախագիծ ՍՊԸ-ն անտեսել է էներգետիկայի մասին ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ կառավարության 13 ապրիլի 2023թ. թիվ 523-Ն որոշման 27-րդ կետի, 22.05.2023 թ-ի ՀՀ Քաղաքաշինության կոմիտեյի նախագահի N 04-Ն հրամանի հավելվածի 127-րդ կետի պահանջները: 5. Երևանի քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունը անտեսելով էներգետիկայի մասին ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ կառավարության 13 ապրիլի 2023թ. թիվ 523-Ն որոշման 4-րդ և 27-րդ կետերի, 22.05.2023 թ-ի ՀՀ Քաղաքաշինության կոմիտեյի նախագահի N 04-Ն հրամանի հավելվածի 127-րդ կետի պահանջները, Հայաստանի Էլեկտրական Ցանցեր ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 10 ԿՎ էլեկտրահաղորդման օդային գծերի անվտանգության գոտիում գտնվող հողամասի սեփականատիրոջը Սապետ Ավետիսյանին 08.04.2024 թ-ին տրամադրել է հ.01/18-01-165-24 նախագծման թույլտվությունը՝ ք. Երևան Աջափնյակ Սիլիկյան թաղ. 7- րդ փողոց հ.83/5 հասցեում բնակելի տան կառուցման նախագիծ մշակելու համար: հ.01/18-01-165-24 նախագծման թույլտվությանը կցվել է Երևան, Աջափնյակ վարչական շրջան, Սիլիկյան թաղամաս, 7-րդ փողոց 0 վերջ հասցեին վերաբերվող Սապետ

Ավետիսյանի անվամբ ձևակերպված էլեկտրական հոսանքով ապահովման բաժանորդի պայմանագիրը: Այս պայմանագիրը չի վերաբերվում ք. Երևան Աջափնյակ Սիլիկյան թաղ. 7-րդ փողոց հ.83/5 հասցեի հողամասին: Ելնելով վերոգյալից, պարզ է դառնում Երևանի քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն կողմից Սապետ Ավետիսյանին 08.04.2024 թ-ին տրամադրված հ.01/18-01-165-24 նախագծման թույլտվությունը <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի, 2-րդ մասի համաձայն անվավեր է: 6. **Պաշտոնական Անփութություն և Համակարգային Կոռուպցիա** Վերոգրյալ բոլոր փաստերը ցույց են տալիս, որ Երևանի քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության համայնքային ծառայողներ Ն. Վասիլյան, Ն. Բաղդասարյան, Վ. Հովակիմյան, Ա. Սարգսյան, Ա. Նանուշյան, Է. Հարոյան **գիտակցաբար անտեսել են** էներգետիկայի մասին ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ կառավարության 13 ապրիլի 2023թ. թիվ 523-Ն որոշման 4-րդ և 27-րդ կետերի, 22.05.2023 թ-ի ՀՀ Քաղաքաշինության կոմիտեյի նախագահի N 04-Ն հրամանի հավելվածի 127-րդ կետի պահանջները և տրամադրել են անօրինական շինարարության թույլտվություն: ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

Վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ա) ենթակետի համաձայն.

Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով. Երևանի քաղաքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության համայնքային ծառայողներ Ն.Վասիլյանը, Ն. Բաղդասարյանը, Վ. Հովակիմյանը, Ա. Սարգսյանը, Ա. Նանուշյանը, Է. Հարոյանը կոռուպցին գործարքներ են կնքում հողի գողերի հետ:

Նախկին Կոռուպցիոն ռեժիմի համայնքային ծառայողները պետք է աշխատանքից ազատվեն: Աղբյուրը https://hlk21.blogspot.com/2025/11/10-27.html 4. Մասնակիցների սպասվող թիվը՝ շուրջ 105: 5. Հավաքի անցկացման ժամանակ օգտագործվելիք առարկաները կամ տեխնիկական միջոցները՝ առարկաները կամ տեխնիկական միջոցներ չեն օգտագործվելու: 6. Կարգադրիչների նախատեսվող թիվը՝ 1 մարդ: 7. Հավաքի կազմակերպչի տվյալները՝ ազգանուն, անուն, հայրանուն՝ Հակոբյան Էդգար Ռուդիկի: 8. Հավաքի ղեկավարի տվյալները՝ ազգանուն, անուն, հայրանուն՝ Հակոբյան Էդգար Ռուդիկի: Սույն իրազեկման քննարկումը, դրա վերաբերյալ ակտերի ընդունումը և տեղեկացումն իրականացնել «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքին համապատասխան՝ ղեկավարվելով «Վարչարարության

հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված համաչափության և վարչարարության մյուս հիմնարար սկզբունքներով։
Հավաքի կազմակերպիչ՝ Հակոբյան Էդգար

Դիմող՝

ԷԴԳԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ